ՏԵՂԵԿԱՆՔ
«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԳՐԻԲՈՅԵԴՈՎԻ ՓՈՂՈՑԻ N 48 ՀԱՍՑԵՈՒՄ ԿԱՌՈՒՑՎՈՂ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2206-Ն որոշմամբ հաստատվել է Հանրային ծառայողներին բնակարաններով ապահովման ծրագրի շրջանակներում Երևան քաղաքի Գրիբոյեդովի փողոցի N 48 հասցեում կառուցվող բազմաբնակարան շենքային համալիրի բնակարանների և ավտոկայանատեղիների վաճառքի կարգը: Ծրագրի շրաջանակներում հանրային ծառայողների համար նախատեսված է բաշխել թվով 1000 բնակարան և 1000 ավտոկայանատեղի:
Առաջին փուլով նախատեսված է 478 բնակարան և 478 ավտոկայանատեղի, իսկ երկրորդ փուլով՝ 522 բնակարան և 522 ավտոկայանատեղի: Շենքային համալիրի կառուցումը նախատեսվում է ավարտին հասցնել 42 ամսվա ընթացքում:
Ծրագրի ընդհանուր պայմանները՝ ստորև:

☑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Հանրային ծառայողներին բնակարաններով ապահովման նպատակով Երևան քաղաքի Գրիբոյեդովի փողոցի N 48 հասցեում կառուցվող բազմաբնակարան շենքային համալիրից բնակարանների վաճառքի պայմանների վերաբերյալ

Ծրագրի շահառուները՝

1. «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված պաշտոններ զբաղեցնող, ինչպես նաև «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված մարմինների հաստիքացուցակով նախատեսված քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձինք (այսուհետ՝ սույն կարգի կիրառման իմաստով՝ ծառայողներ), որոնց գործատուն և աշխատավայրը գտնվում են Երևան քաղաքում:

2. Ծրագրի շահառու դառնալուն կարող են հավակնել նաև օտարերկրյա պետություններում գտնվող՝ Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմիններում դիվանագիտական պաշտոն զբաղեցնող անձինք:

3. Ծրագրի շահառու դառնալուն կարող են հավակնել նաև Հայաստանի Հանրապետության վարչապետի համաձայնությամբ, որպես խրախուսում (երկարամյա ծառայության, աշխատանքային գործունեության ընթացքում ցուցաբերած բարձր արդյունավետության և ներդրած նշանակալի ավանդի համար), պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության տակ գործող պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, հարյուր տոկոս պետական բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպությունների, ինչպես նաև ծրագրերի իրականացման գրասենյակների այն աշխատակիցները, որոնց գործատուն գտնվում է Երևան քաղաքում: Վարչապետի համաձայնությունը կարող է

տրվել համապատասխան լիազոր մարմնի ղեկավարի գրավոր հիմնավորված միջնորդության առկայության դեպքում: Վարչապետի համաձայնությունը ստացած մարմինների աշխատողների դիմ- հայտերը ներառվում են համապատասխան լիազոր մարմնի գերատեսչական տեղեկանքում:

- Բնակարանների բաշխման ու վաճառքի աշխատանքները ՀՀ անունից կազմակերպվում և ղեկավարվում է Քաղաքաշինության կոմիտեի միջոցով
- Կառուցապատումն իրականացնող՝ «ՕՐԴ-ԴԵՎԵԼՈՓՄԵՆԹ» ՍՊԸ
- Բնակարանների ընդհանուր մակերեսի 1քառ.մետրի միջին արժեքը՝
  - ✓ ներքին հարդարմամբ՝ 377.000 դրամ,
  - ✓ առանց ներքին հարդարման, սակայն արտաքին դռների և պատուհանների տեղադրմամբ, սվաղած պատերով և միջնապատերով, ցեմենտյա շաղախից հատակով, ջեռուցման, ջրահեռացման, ջրամատակարարման խողովակներով և էլեկտրամատակարարման լարանցումներով՝ 339,000 ՀՀ դրամով՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.
- Ավտոկայանատեղիի արժեքը՝ 2,680,000 ՀՀ դրամ